# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքապետարանի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-96/25ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հայտարարության տեքստի պարզաբանումը հաստատելու մասին նիստի

ք. Ապարան «21» «08» 2025թ.
ժամը՝ 14:00

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝
Հրայր Մկրտչյան-Համայնքի ղեկավարի տեղակալ
Հանձնաժողովի անդամներ՝
Իդա Թադևոսյան – աշխատակազմի քարտուղար
Արգիշտի Միսակյան- ծրագրերի բաժնի պետի ժ/պ

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Մարիամ Հայրապետյան

**Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հաստատել ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-96/25ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հրավերի պարզաբանման տեքստը

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0*

1. Ընթացակարգի հրավերի տեքստի պարզաբանումը հաստատելու մասին

1.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ <<Գնումների գործընթացի կազմակերպման>>> կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով գնահատող հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում **որոշեց.**

1. Հաստատել ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-96/25 ծածկագրով ՝ Ապարանի համայնքապետարանի կարիքների համար դարբնագործ ժամացույցի ձեռքբերման հրավերի տեքստի պարզաբանման հայտարարությունը

**Հարցադրում**

Հարգելի՛ գործընկեր, ձեր կողմից դրված պահանջներին համապատասխանում է կոնկրետ արտադրողի կոնկրետ մոդելի ժամացույց: Խնդրում ենք պահանջները ներկայացնել ՀՀ գնումների օրենսդրության համաձայն, մեկից ավելի մասնակիցներ ապահովելու համար: Կամ խնդրում ենք նշել համարժեք ևս երկու մոդել, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված պարզաբանման:

**Պարզաբանում**

**Հարգելի գործընկեր.**

Ապարանի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-96/25 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված դարբնագործ ժամացույցի տեխնիկական բնութագրում առկա չէ որևէ կոնկրետ արտադրողի կամ կոնկրետ մոդելի ժամացույցի հղում: Ներկայացված կից նկարը ժամացույցի տեսքը բնութագրելու համար է: Նկարում առկա մոդելի հղումը

Պատվիրատուի համար չի հանդիսանում կոնկրետ մոդելի ապրանքի պահանջ, այլապես տեխնիկական բնութագրում նույնպես կներկայացվեր նկարում ներկայացված ապրանքի մոդելը:Ելնելով վերոգրյալից ներկայացված տեխնիկական բնութագիրը բավարարում է <<Գնումների մասին >> ՀՀ օրենքի և իրավական ակտերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0*

| | | |
|---|---|---|
| Գնահատող անձնաժողովի նախագահ՝ | ______________ | Հ. Մկրտչյան |
| հանձնաժողովի անդամներ՝ | ______________ | Ի. Թադևոսյան |
| | ______________ | Ա. Միսակյան |
| Հանձնաժողովի քարտուղար ՝ | ______________ | Մ. Հայրապետյան |